

11.

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
PEDAGOGY AND PSYCHOLOGY  
ПЕДАГОГИЧЕСКИЕ  
И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАУКИ**

**ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԿԱՏԱԱՄԲ  
ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ  
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**

**Լ. Ն. ՔՈՒՐՔՅԱՆ**

*Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ*

**Ն. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՀՊՄՀ ասպիրանտ*

Հարցն այն մասին, թե ինչո՞ւ են հոգեբանորեն առողջ և բավականին բարեկիրթ ծնողները հաճախ բռնություն կիրառում սեփական երեխաների նկատմամբ, միշտ էլ հուզել է բազմաթիվ մասնագետների, մասնավորապես հոգեբանների, մանկավարժների, սոցիալական աշխատողների և այլն: Կարծիք կա, որի համաձայն, դաստիարակությունը իր էությամբ բռնություն է, սակայն թե որտեղ է դրվում երեխային ճնշելու, սեփական կարծիքը թելադրելու և բնականոն ուղղորդող, կողմնորոշող ազդեցությունների միջև սահմանը, կախված է ծնողի կամ մեծահասակի սոցիալ-հոգեբանական հասունությունից, փորձից, մանկական հիշողություններից, ստացած կրթությունից և դաստիարակությունից:

«Ծեծված երեխայի սինդրոմի» վաղ ուսումնասիրությունների հեղինակները (E. Merrill, 1962; B. Steele, C. Polloc, 1968) փորձել են առանձնացնել սեփական երեխաներին ծեծող ծնողների վարքագծային և անձնային առանձնահատկությունները: Նման ծնողները բնորոշվում էին որպես իմպուլսիվ (E. Elmer, 1965), անհաս (M. Cohen et al., 1966), ռիզիկո, բռնակալ, խրոնիկ ագրեսիվ (E. Merrill, 1962), կախյալ և նարցիսային (C. Pollock, B. Steele, 1972), ընտանիքից և ընկերներից մեկուսացած (B. Steele, C. Pollock, 1968), ամուսնական դժվարություններ ունեցող (C. H. Kempe et al., 1962) և այլն<sup>1</sup>:

Երեխաների նկատմամբ բռնությունների մոտիվացիան ունի չորս հիմնական բլոկ՝

<sup>1</sup> **Հարությունյան Կ.** Երեխայի հանդեպ բռնության հետազոտումը և կանխարգելումը, Երևան, 2005:

1) **դաստիարակչական բլոկ** - երեխաների վարքը ուղղելու, շտկելու ձգտում: Այսօր երեխաների նկատմամբ բռնությունների կեսից ավելի դեպքում ընկած է հենց այս դրդապատճառը:

2) **երեխայի նկատմամբ վրեժխնդրության բլոկ** - ծնողները երեխային պատժում են այն բանի համար, որ նա ծնվել է, որ նրան պետք է խնամել, որ նա հոգս է պատճառում մեծահասակներին:

3) **բացասական հույզերի տեղափոխման բլոկ** - մեծահասակը իր լարվածությունը, ագրեսիան, զայրույթը և մնացած բացասական հույզերը լիցքաթափում է ավելի փոքրերի և թույլերի վրա:

4) **դաժանության մոտիվացիայի բլոկ** - խոսքը գնում է դաժանության՝ որպես ինքնանպատակի մասին: Երեխային դաժանորեն ծեծելը կատարվում է հանուն այն հաճույքի, երբ անձը ստանում է ծեծելուց և մյուս անձի տառապանքներից: Այս մոտիվացիան դրսևորվում է երեխաների նկատմամբ բռնությունների մոտ 10% դեպքերում <sup>2</sup>

Սեփական երեխաներին բռնության ենթարկող ծնողների անձնային առանձնահատկությունների և հոգեախտաբանության վերաբերյալ առավել ճշգրիտ տվյալներ ստացվել են նրանց հոգեբուժական բուժման դիտման կամ երեխաների հետ փոխհարաբերությունների ժամանակ: Վ. Սթիլը (B. Steele, 1968) կարևոր էր համարում երեխաների չարաշահման ժամանակ կոպիտ, մերժող մոր հետ ծնողի իդեոտիֆիկացիան: Երեխաների հետ դաժան վերաբերվող ծնողների մեծամասնությունը իրենց մանկության ընթացքում իրենք են դարձել բռնության, մերժման, դաժան վերաբերմունքի զոհ իրենց ծնողների կողմից:

Դ. Ռապապորտը և Ա. Ռուբերկուեն (D. Rapoport, A. Roubergue, 1988) ուսումնասիրելով բռնության ենթարկված 150 երեխաների, եկան եզրակացության, որ «մոռացված երեխաների» ծնողների 60% - ը ունեցել են տարբեր հոգեբուժական խանգարումներ՝ դեպրեսիա, ծանր տագնապային խանգարումներ, սուր գառանցական հակազդումներ, ալկոհոլամոլություն, սոցիալ-տնտեսական խնդիրներ, ինչպես նաև սեփական մանկական կյանքում ծանր դեպրիվացիա, իսկ 15% ծնողները, որոնք չունեին բացահայտ հոգեկան խանգարումներ, այնուամենայնիվ ունեին դեղահոգեբանական օգնության կարիք:<sup>3</sup>

Բազմաթիվ ուսումնասիրություններում ուժեղ կապ է բացահայտվել ֆիզիկական բռնության և ալկոհոլամոլության, թմրամոլության միջև: Հայտնի է, որ ինքեստը զրանցվել է այն ընտանիքներում, որոնց 35% - ը ալկոհոլամոլներ են (J. Garbarino, D. Sherman, 1980; J. M. Leventhal, 1982; M. S. Kasim et. al., 1994): Հեղինակների կողմից ընդգծված է, որ նման ծնողները ունենում են ցածր ինքնագնահատական, կորցնում են իրենց ծնողական հնարավորությունների նկատմամբ հավատը, իրենց զգում են անհաջողակ: Մայրերը վախենում են լքված լինելուց, իսկ ցածր ինքնագնահատականով հայրերը, մերժված զգալով երեխաների կողմից, կարող են զայրույթի պահին բռնության դիմել:<sup>4</sup>

<sup>2</sup> *Григович И. Н.* Синдром жестокого обращения с ребенком. Общие вопросы и физическое насилие: Учебное пособие для студентов и врачей. – Петрозаводск, 2001.

<sup>3</sup> **Հարությունյան Կ.** Երեխայի հանդեպ բռնության հետազոտումը և կանխարգելումը, Երևան, 2005:

<sup>4</sup> *Myers, John* Evidence in Child Abuse and Neglect Cases New York: Wiley and Sons, 1997.

Ա. Գրինը (A. H. Green, 1976) բացահայտեց, որ սեփական երեխաների ֆիզիկական բռնության ենթարկող մայրերը առանձնանում են մյուս մայրերից նրանով, որ նրանք առավել հաճախ են երեխաներին բնորոշում որպես դժվար և կախյալ, իսկ իրենց ամուսիններին և ծնողներին՝ որպես հուզականորեն անպիտան: Նրանց բնորոշ են հետևյալ անձնային առանձնահատկությունները՝ ինպուլսիվության անբավարար հսկողություն, ցածր ինքնահարգանք, նարցիսիզմի բարձր մակարդակ, փոփոխականություն և իդենտիֆիկացիայի անկայունություն: Այս դեպքում երեխաները դառնում են սեփական ծնողների խորտակված մանկության «քավության նոխազը»<sup>5</sup>:

Որոշ ուսումնասիրություններ (K. Cigno, 1995; T. W. Wind, L. Silvern, 1994) ցույց տվեցին, որ ծնողների դեպրեսիան, ինչպես նաև ցածր ինքնագնահատականը կարող են նպաստել երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի աճին՝ հանդիսանալով ռիսկի գործոն, միևնույն ժամանակ լինելով նախկինում կրած բռնության հետևանք<sup>6</sup>:

Հաճախակի դժվարություններ են առաջանում այն հարցին պատասխան տալու շուրջ, թե արդյոք երեխայի վատ վարքը բռնության արդյունք է, թե՞ դրան նպաստող գործոն: ԱՄՆ-ի ազգային ուսումնասիրության տվյալների համաձայն՝ պարզվեց, որ գրեթե երեխաների 25% - ի մոտ նկատվել են վարքի դժվարություններ բռնությունից մոտ մեկ տարի առաջ:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարող ենք առանձնացնել երեխայի նկատմամբ բռնության սուբյեկտիվ անբարենպաստ գործոնները, որոնք պայմանավորված են ծնողի և երեխայի անձով (տե՛ս աղյուսակ 1):

---

<sup>5</sup> *Гайдаренко Н. В., Ярославцева Н. Д.* Психологические последствия жестокого обращения с детьми // Актуальные проблемы современного детства.- М., 1994, էջ 88-92.

<sup>6</sup> *Հարությունյան Կ.* Երեխայի հանդեպ բռնության հետազոտումը և կանխարգելումը, Երևան, 2005:

Սուբյեկտիվ գործոններ՝ պայմանավորված ծնողի անձով	Սուբյեկտիվ գործոններ՝ պայմ. երեխայի անձով
<p>• Ծնողի անձի առանձնահատկությունները՝ ռիզիկոսություն, տագնապայնություն, գրգռվածություն, ցածր ինքնագնահատական, դեպրեսիվություն, ինպուլսիվություն, կախվածություն, ապրումնակցման և բացվածության ցածր մակարդակ, ցածր սթրեսակայունություն, հուզական լաբիլություն, ագրեսիվություն, պարփակվածություն, կասկածամտություն և ինքնանույնականացման հետ խնդիրների առկայություն [А.И.Ткачаев, 2000]:</p> <p>• Շրջապատի նկատմամբ ծնողի նեգատիվ վերաբերմունք, երեխայի նկատմամբ ոչ աղեկվատ սոցիալական սպասումներ: Այս դեպքում ծնողները երեխայի վարքը գնահատում են որպես ուժեղ սթրեսոր: Նրանց առանձնացնում է դժգոհությունը և վատ ինքնագզացողությունը: Նրանք իրենց դժբախտ են զգում, դժգոհ են իրենց ընտանեկան կյանքից, տառապում են սթրեսից:</p> <p>• Սոցիալական հմտությունների ցածր մակարդակ: Բացակայում են կոնֆլիկտների լուծման, սթրեսի հաղթահարման, ուրիշներից օգնություն խնդրելու, բանակցություններ վարելու հմտությունները: Միևնույն ժամանակ աշխատում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմները: Բռնությունը սքողվում է, դառնում է ընտանեկան գաղտնիք, որի բացահայտ քննարկումը արգելվում է, քանի որ առաջ է բերում վախ, մեղադրանքներ, ամոթի զգացում, մեղավորություն և այլն:</p> <p>• Ծնողների հոգեկան առողջություն արտահայտված հոգեախտաբանական շեղումները, նյարդայնությունը, դեպրեսիվությունը, սուիցիդալ հակումները մեծացնում են երեխաների նկատմամբ բռնության հավանականությունը:</p> <p>• Ծնողների ակտիվամոլություն և թմրամոլություն, ինչպես նաև դրանցից բխող հոգեդեղաբանական խնդիրներ և աֆեկտիվ խանգարումներ՝ ագրեսիվություն, հիպերսեքսուալություն, գրգռվողականություն, կոորդինացման խանգարումներ, սեփական վարքի վերահսկման թուլացում, քննադատության նվազում, անձի փոփոխություններ և այլն:</p> <p>• Առողջական խնդիրներ՝ ախտաբանորեն ընթացող հղիություն, ընդհատված հղիություն, ծանր ծննդաբերություն: Այս բոլորը ազդում են կնոջ նյարդային համակարգի վրա՝ դարձնելով նրան սթրեսի նկատմամբ պակաս կայուն:</p> <p>• Հուզական տհասություն և մտավոր հետամնացություն: Ծնողը ոչ միշտ է հասկանում երեխայի վիճակը, հատկապես երբ երեխան հիվանդ է, այդ պատճառով կարող է երեխային թողնել առանց խնամքի:</p> <p>• Ծնողական հմտությունների և զգացմունքների ցարգացման ցածր մակարդակ: Ծնողական զգացմունքների և հմտությունների դեֆիցիտը առավելապես բնորոշ է երիտասարդ, մտավոր հետամնաց, հոգեկան հիվանդություն ունեցող ծնողներին [Михайлова, 1998]:</p>	<p>• Անցանկալի երեխա, ինչպես նաև երեխա, որը ծնվել է նախորդ երեխայի կուրսուտից հետո,</p> <p>• Ժամանակից շուտ ծնված երեխաներ,</p> <p>• Բազմազավակ ընտանիքի երեխա, որտեղ երեխաների տարիքային տարբերությունները քիչ են (ծնված են միևնույն տարում), բնածին կամ ձեռքբերովի արատներով, ցածր ինտելեկտով, առողջական խնդիրներ ունեցող երեխաներ:</p> <p>• Վարքի խանգարումներով երեխաներ,</p> <p>• Անձի որոշակի հատկություններ ունեցող երեխաներ (պահանջկոտ, պարփակված, ապատիկ, անտարբեր, կախյալ, ներշնչվող և այլն),</p> <p>• Ծնողների նյարդերի վրա ազդող սովորույթներ ունեցող երեխաներ,</p> <p>• Սոցիալական ցածր հմտություններով երեխաներ,</p> <p>• Ուրիշներից տարբերվող արտաքին կամ ծնողի համար անթույլատրելի առանձնահատկություններ ունեցող երեխաներ (օրինակ՝ ոչ այն սեռի),</p> <p>• Ծանր հղիության և ծննդաբերության հետևանքով ծնված երեխաներ, ինչպես նաև երեխաներ, որոնք հաճախակի հիվանդացել են և կյանքի առաջին տարվա ընթացքում հեռու են եղել մորից:</p>

Վերջին տարիների ընթացքում անցկացված միջավայրի ռիսկի գործոնների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մինչև 21 տարեկան ծնողները կազմում են ռիսկի խումբ և ունեն հատուկ ընտանեկան աջակցության պրեվենտիվ ծրագրերի կարիք: Կարևորը ոչ թե ծնողների երիտասարդ տարիքն է, այլ այն

գործոնները, որոնք առկա են նման ընտանիքներում՝ ծանր ֆինանսական վիճակ, երեխայի, նրա զարգացման վերաբերյալ ոչ ադեկվատ գիտելիքներ, կրթության ցածր մակարդակ, վատ սոցիալական աջակցություն (K. Cigno, P. Burke, 1995; T. W. Wind, L. Silvern, 1994)<sup>7</sup> .:

Բռնության բարձր ռիսկի խումբ են կազմում նաև միայնակ մայրերը, որին հաճախ նպաստում է ֆինանսական անապահովությունը, համապատասխան սոցիալական օգնության բացակայությունը (T. W. Wind, L. Silvern, 1994): Ռիսկի խմբի ծնողներին բնորոշ է սոցիալական մեկուսացումը, ինֆորմացիոն ապահովության ցածր մակարդակ, միայնության զգացումը:

Ֆիզիկական բռնության մեջ երեխայի դերը իրենից բավականին հետաքրքիր հարց է ներկայացնում: Սովորաբար միայն միակ երեխան է ընտանիքում ընտրվում որպես «քավության նոխազ», նա ընկալվում է որպես առավել դժվար և հոգսաշատ: Մանկիկության և վաղ մանկության տարիքները, երբ երեխան առավել քան երբեք անօգնական է և կախյալ մեծահասակներից, հանդիսանում են շատ ծնողների համար սթրեսային ժամանակահատվածներ, հատկապես նրանց համար, ովքեր «հակված են չարաշահման»: Համաձայն փաստացի տվյալների՝ երեխաների նկատմամբ ֆիզիկական բռնության դեպքերի մեծամասնությունը կատարվում է նրանց կյանքի առաջին երկու տարիներում: Գ. Մոսնը, Կ. Ռոբսոնը (H. A. Moss, K. S. Robson, 1970) նշում են, որ երեխայի անդադար ճիչն ու լացը թուլացնում են մոր և մանկան միջև հուզական կապը, իսկ Ս. Բելլը, Մ. Էյնսուորտը (S. M. Bell, M. D. Ainsworth, 1970) այս առումով ավելացնում էին, որ այն մայրերը, որոնք չեն կարողանում հանդուրժել երեխայի լացն ու ճիչը, հեռանում են՝ թողնելով նրան միայնակ: Մյուս կողմից՝ այն երեխաները, որոնք հարաբերականորեն անպատասխան են, պասիվ, քնկոտ և հետ են մնում իրենց զարգացման մեջ, կարող են հավասար չափով ֆրուստրացնել իրենց մայրերին և նպաստել իրենց նկատմամբ բռնության դրսևորմանը<sup>8</sup>: [4]

Ֆիզիկական և հոգեկան արատներով երեխաները նույնպես խոցելի են բռնության համար: Տեսանելի ֆիզիկական թերություններով, բնածին արատներով, մտավոր հետամնացությամբ հաշմանդան երեխաները ոչ միայն շատ հոգս են պատճառում ծնողներին, այլև ընկալվում են ծնողների կողմից որպես ինքնասիրության մշտական ոտնահարման օբյեկտներ:

Վաղաժամ ծնված և թերհաս երեխաները նմանապես մեծ տեղ են գրավում ֆիզիկական բռնության վիճակագրության մեջ (E. Elmer, G. S. Gregg, 1967; M. Klein, L. Stern, 1971; Simonsetal., 1966): Դա կերելի է բացատրել նրանով, որ նման նորածինները ընկալվում են որպես «ոչ գրավիչ» և որպես կանոն, ավելի դյուրագրգիռ են, քան իրենց մյուս հասակակիցները: Նրանք հաճախ ունենում են տարբեր բժշկական խնդիրներ և զարգացման դժվարություններ: Նրանց այս կախյալ վիճակը կարող է երեխայից մեծ սպասումներ ունեցող ծնողներին ֆրուստրացնել և դրանով իսկ դրդել նրանց երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի: Հատկանշական է, որ ժամանակից շուտ ծնված երեխաները կյանքի առաջին տարում ութ անգամ ավելի շատ են բռնության ենթարկվում, քան ժամանակին ծնված իրենց հասակակիցները (K. Cigno, P. Burke, 1995):

<sup>7</sup> *Волкова Е. Н.* Проблемы насилия над детьми и пути их преодоления, Москва, Питер, 2008.

<sup>8</sup> *Вайнрув Алиса*, "Эмоциональное насилие", "Первое сентября", N 19.

Երեխան կարող է նպաստել բռնությանը իր ագրեսիվությամբ, հիպերակտիվությամբ և ինպուլսիվ վարքով: Հիպերակտիվ երեխաները առավել ինպուլսիվ են և ավելի անհանդուրժող են պահանջների նկատմամբ: Դա ֆրուստրացնում է ծնողներին և նպաստում է նրանց կողմից երեխայի նկատմամբ բռնության իրականացմանը: Երեխան էլ իր հերթին կրկնօրինակում է իր ծնողների բռնի վարքը, արտահայտելով միևնույն ագրեսիվությունը և գրգռվածությունը, իր նկատմամբ դաժան վերաբերմունքը կանխելու համար, և այդպիսով ստեղծվում է բռնության և չարաշահման փակ շղթա: Հիմնական պատճառների շարքում, որոնք դրդում են մեծահասակներին երեխայի նկատմամբ ֆիզիկական ներգործության միջոցառումների կիրառմանը, կարելի է դասել վատ վարքագիծը, ուսումնական առաջադիմության ցածր մակարդակը, տնային պարտականությունների հարցում թերացումը և այլն: Այսպես՝ հարցվողների 17% - ը արդարացված է համարել երեխայի վատ վարքի համար ֆիզիկական պատիժը: Նկարագրելով սեփական երեխաներին՝ նրանք նշում էին գրգռվողականությունը, ինպուլսիվությունը, ագրեսիվությունը, չափազանց գերակտիվությունը: Հետագա վերլուծությունը, սակայն, ցույց է տալիս, որ նման վարքով երեխան փորձում է իր վրա հրավիրել մեծահասակների ուշադրությունը, բայց որպես պատասխան՝ բախվում է նրանց կողմից ագրեսիային: Երեխաների 13% - ը ֆիզիկական բռնության է ենթարկվում վատ առաջադիմության համար: Պետք է նշել, որ վատ սովորելու համար պատժի ետևում հաճախ թաքնված է լինում սեփական անհաջողությունների նկատմամբ ծնողի վերաբերմունքը:

Ուսումնասիրությունները բացահայտել են երեխայի առանձնահատկությունների մի ամբողջ շարք, որոնց առկայության դեպքում աճում է նրա բռնության ենթարկվելու հավանականությունը<sup>9</sup>:

Ինչ վերաբերում է սեռական բռնության զոհ երեխաների անձի կամ բռնության գործընթացում նրանց դերի գործոնին, ապա պետք է նշել, որ գրականության մեջ վաղուց շրջանառվում է «գայթակղիչ երեխա» արտահայտությունը, որով բնութագրում էին ցեստի կամ սեռական բռնության մեջ երեխայի անգիտակցական մասնակցության հարցը: Այն ընտանիքներում, որտեղ երեխան մատնված է անուշադրության և բարձիթողության ծնողների կողմից, հաճախ երեխան դիմում է տարաբնույթ գործողությունների՝ ծնողի ուշադրությանը և սիրուն արժանանալու համար: Երախայի հոգեսեռական զարգացումը, արթնացող սեռական մղումների նկատմամբ նրա վերաբերմունքը, մեծապես պայմանավորված է ընտանիքի սոցիալ – հոգեբանական մթնոլորտով, որում անցել է նրա վաղ մանկությունը, ինչպես նաև ընտանեկան դաստիարակության առանձնահատկություններով: Հնարավոր է՝ այն պատճառով, որ նման ընտանիքներում երեխայի հուզական պահանջները չեն կարող բավարարվել ավելի վեհ ճանապարհով, երեխան հուսահատ փորձեր է կատարում հարմարվելու մեծահասակի ցանկություններին, որ արժանանա նրա ուշադրությանը: Ջ. Վեյսը ավելի քան 40 տարի առաջ անցկացրած հետազոտությունների մեջ նշել է, որ իրենց կողմից ուսումնասիրված սեռական բռնության ենթարկված երեխաներից ոմանք՝ ավելի

<sup>9</sup> *Асанова Н. К.* Руководство по предупреждению насилия над детьми: Учебное издание для психологов, детских психиатров, психотерапевтов, студентов педагогических вузов. – М., ВЛАДОС, 1997. *Боулви Джон*, Создание и разрушение эмоциональных связей.

քան 70 երեխա, ոչ միայն փորձում էին գայթակղել բժիշկներին հոգեբուժական հարցազրույցի ժամանակ, այլև պատմել էին ծնողներին, որ բժիշկը փորձել է գայթակղել իրենց<sup>10</sup>:

Ինցեստի դեպքում երեխան դիտարկվում է որպես զոհ, անկախ իրական հանգամանքներից, անգամ եթե նա «գայթակղիչ» վարքագիծ է դրսևորել: Այդ համատեքստում երեխան ավելի շուտ դիտարկվում է ոչ թե սեռական «ակտի» կամ այլասերման, այլև խանգարված կամ դեպրիվացված ընտանեկան իրավիճակի զոհ<sup>11</sup>:

Պետք է նշել, որ հասուն տարիքում անձինք, որոնք մանկության տարիքում ենթարկվել են ֆիզիկական կամ այլ բռնության, կարող են հասարակության նկատմամբ դաժան լինել: Բռնության ենթարկված կամ ընտանիքում բռնության ակնհաստես դարձած երեխաների մոտ 40% - ը չեն կարողանում բռնությունից խուսափել նաև հասուն տարիքում: Նրանք կամ կրկին դառնում են բռնության զոհեր, կամ իրենք են ցուցաբերում դաժան վերաբերմունք սեփական ընտանիքի նկատմամբ, քանի որ, ապրելով նման միջավայրում, համարում են ընտանեկան բռնությունը ոչ թե հանցանք, այլ ընտանեկան կոնֆլիկտների լուծման միակ միջոցը:

Այսպիսով՝ երեխաների նկատմամբ բռնությունը երևույթ է, որը պահանջում է երկկողմանի և համապարփակ դիտարկում և մեկնաբանություն: Մի կողմից այն փակ շղթա է, որը անընդհատ պատվում է սերնդեսերունդ, մյուս կողմից՝ ծնողի թերգարգացած կամ ախտահարված հուզական, սոցիալական կամ հոգեբանական որակների և շատ քիչ դեպքերում նույնիսկ երեխայի ենթագիտակցական մղումների արդյունք: Արդյունքում թե երեխան, թե ծնողը ձեռք են բերում դժվար հաղթահարելի անձնային և վարքային փոփոխություններ, որոնք հանգեցնում են բացասական հետևանքների:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հարությունյան Կ.** Երեխայի հանդեպ բռնության հետազոտումը և կանխարգելումը, Երևան, 2005:

2. **Ասանովա Ն. Կ.** Руководство по предупреждению насилия над детьми: Учебное издание для психологов, детских психиатров, психотерапевтов, студентов педагогических вузов. – М., ВЛАДОС, 1997.

3. **Բոուլբի Դձոն**, Создание и разрушение эмоциональных связей.

4. **Վայրուվ Ալիսա**, "Эмоциональное насилие", "Первое сентября", N 19.

5. **Վոլկովա Ե. Ն.** Проблемы насилия над детьми и пути их преодоления, Москва, Питер, 2008.

6. **Գայդարենկո Ն. Վ., Կրոսլավցեվա Ն. Դ.** Психологические последствия жестокого обращения с детьми // Актуальные проблемы современного детства.- М.,1994, с. 88-92.

7. **Գրիգորի Ի. Ն.** Синдром жестокого обращения с ребенком. Общие вопросы и физическое насилие: Учебное пособие для студентов и врачей. – Петрозаводск, 2001.

8. Дети и психология агрессии, **Ս. Ն. Ենիկոլոպով** (журнал "Школа здоровья", N 3, 1995).

<sup>10</sup> Дети и психология агрессии, **Ս. Ն. Ենիկոլոպով** (журнал "Школа здоровья", N 3, 1995). **Կարթով Ա. Վ. Բոնոմարեվա Վ. Վ.** Психология рефлексивных механизмов управления, М., ИП.РАН, 2000.

<sup>11</sup> **Կարթով Ա. Վ., Տկիտչևա Ի. Մ.** Психология рефлексии, М., ИП. РАН, 2002.

9. **Карпов А. В., Пономарева В. В.** Психология рефлексивных механизмов управления, М., ИП. РАН, 2000.
10. **Карпов А. В., Скитяева И. М.** Психология рефлексии, М., ИП.РАН, 2002.
11. **Малкина-Пых И. Г.** Экстремальные ситуации. – М.: Изд-во Эксмо, 2005, 960 с.
12. **Myers John,** Evidence in Child Abuse and Neglect Cases New York: Wiley and Sons, 1997.

#### **СУБЪЕКТИВНЫЕ НЕБЛАГОПРИЯТНЫЕ ФАКТОРЫ ЖЕСТОКОГО ОБРАЩЕНИЯ С РЕБЕНКОМ В СЕМЬЕ**

***Л. Н. КУРКЧЯН  
Н. С. АРУТЮНЯН***

В статье авторы попытались выявить и обобщить разнообразные субъективные причины семейного насилия над ребенком. К их числу относятся факторы, обусловленные индивидуально-личностными особенностями и культурно-образовательным уровнем родителей, а также мотивы, обусловленные личностными, поведенческими особенностями самого ребенка. В результате насилие перерастает в замкнутую цепь, которая при отсутствии соответствующих профилактических мер становится основой нового насилия и агрессии.

#### **THE SUBJECTIVE UNFAVOURABLE FACTORS OF VIOLENCE TOWARDS CHILDREN IN FAMILIES.**

***L. N. QURQCHYAN  
N. S. HARUTYUNYAN***

In the article the authors have made an attempt to summarize and reveal the subjective reasons of family violence towards children which are numerous, such as the factors depending on the parent's individual and psychological peculiarities, mental health, the level of cultural and educational development as well as the motives based on child's personal peculiarities, health and behaviour. As a result, violence changes into closed chain which becomes the base for a new violence and aggression for lack of the appropriate preventive measures.